₨ 200 #

1621-U2

282
5.

1023

ԳԻՐՔ
# ԱՂՕԹԻՑ
## ՈՐ ԿՈՉԻ ԺԱՄԱԳԻՐՔ:

Արարեալ ըստ Դասաւորութեան հոգե-
լոյս Կաթուղիկէին սրբոյ Աթո-
ռոյս Էջմիածնի :

Եւ վերստին Տպագրեալ ՚ի Հայրապետութեան Լուսաւոր-
չաց Աթոռ մերոյ՝ Սրբոյ Գահոյն Էջմիածնի՝ Տն ՂՈՒ-
ԿԱՍՈՒ Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամ Հայոց :

Հրամանաւ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Ծայ-
րագոյն Նուիրակի և Հիւսիսային կողմանս եղ-
եալ ազգիս Հայոց՝ Առաքելաշաւիղ Առաջնոր-
դի [illegible] Երկրպագելի Արղու-
թեան՝ Իշխանազնեաց Տն Յովսէփայ Սրբազան
Արք Եպիսկոպոսի, և Հիմնադրի նոր Նախիջևանու
և Գրիգորիուպօլու Քաղաքացն Հայոց :

Յամի Տն 1793: Իսկ ՚ի Թուին Հայոց ՌՄԽԲ :
Փետրուարի 20 :

Արդեամբք և ծախիւք՝ ՚ի Հնդկէս ՚ի Մադրաս
բնակելոյ Զաքարեանց Պարոն Իշխան Ն...
Յօհաննջանեան Կէրաքեան :

՚Ի տպարանի Նորին Բարձր Սրբազնութեան

Ընդ հովանեաւ Երկնահանգէտ Սուրբ Խաչ
Վանիցն որ ՚ի Նորն

ՆԱԽԻՋԵՒԱՆ

9/09-5-Z
1621-ԿԲ

243

Յառաջաբանութիւն տն Պաղտասար Աճէնեանց Հայրապետի՝ ի հեղինակէ Գրքոյս առ ազգն իւր օրհնեալ.

# ԵՒ ԳԻՏԵԼԻ Է

զի քան ո՛չ յայլ ինչ գործ
այնպէս ստիպէ զմեզ որպէս յա-
ղօթս. ուստի և պատուիրէ մեզ
անսահման ժամանակաւ առնել
զաղօթս. ըստ այնմ, Արթուն կա Ղուկաս
ցէք՝ և յամ ժամ աղօթս արա- 21. 36.
րէք. և թէ՝ Պարտ է յամ ժամ Ղուկաս
կալ յաղօթս. և թէ՝ Յաղօթս 18. 1.
կացէք՝ զի մի մտանիցէք ՚ի փորձու- Մարկոս
թիւն. և ըստ պօղոսի թէ, Ան- 14. 38.
դադար աղօթս արարէք. և ըստ 1 Թեսա
Երեմիայի թէ, Կարդա առ իս և 5. 17.
տաց քեզ պատասխանիս. և ըստ Երեմ
սի 33. 3.

Սիրաք սիրաքայ, Մի՛ արգելցիս միշտ ա-
18. 22. ղօթել։ Եւ ինքն անկարօտն ամ̃ի
որ ո՛չ ումեք կարօտի՝ այլ վ̃ տա
լոյ մեզ օրինակ՝ առնէր աղօթս. ք̃
Ղուկ. այնմ թէ, Էր 'ի տագնապի. և
22. 43. մտադիւրութ̃բ կայր յաղօթս. և
Ղուկ. թէ, 'Ի տուէ 'ի տ̃ճրին ուսուցա
2. 37. նէր. և զգիշերն հանէր 'ի գլուխ
Ղուկ. 6. 12. յաղօթս ոյ, Արդ վ̃ առաւել օգ
տակարութ̃ե աղօթից՝ յորդորէ
Յակոբ. զմեզ ոյն՝ աղօթել միշտ. Քանզի
5. 15. աղօթքն փրկեն զմեզ 'ի հիւանդու
թ̃եց. ք̃ յակոբայ. աղօթքն հաւա
տով՝ փրկեսցեն զհիւանդն. Եւ
առնեն երկայնակեցս. ք̃ եսայեայ
Եսայ. Լուա՛յ բարբառոյ աղօթից քոց.
38. 5. և տեսի զարտասուս քո. ահա
սիկ յաւելում 'ի ժամանակս քո
Դան. հնգետասան ամ. Այլ. և ազատեն
1. 35. 'ի վշտաց. որպ̃ զշուշան առ դանիէ
Գործ. լիւ. Եւ 'ի բանտէ. որպ̃ զպետրոս
12. 5. վասն

վս՟ սուրբ աղօթելոյ եկեղեցւոյն։
Այլ թողուն զմեղս. ըստ այնմ,
Արասցեն աղօթս. եւ եթէ՝ մե- Յակոբ 5. 14.
ղըս ինչ գործեալ իցէ թողցի
նմա։ Այլ առնեն յաղթօղս Եսայ 57. 11.
՚ի մարտի. զի յորժամ տարածէր
մովսէս զձեռսն յաղօթս՝ յաղ-
թէին զամաղէկ։ Ո՞ զի առաւել
արժէ մի սրբոյ աղօթելն, քան ան
թիւ մեղաւորաց պատերազմն
ասեն վարդապետք։ Այլ փախու
ցանեն զդեւս. ըստ այնմ, Այս Մատթ 17. 20.
ազգ՝ ոչ իւիք ելանէ՝ եթէ ոչ
աղօթիւք եւ պահօք։ Այլ բու-
սաւորեն զմիտս. ըստ վարդապետաց
եկեղեցւոյ թէ, Աղօթիւք բու-
ծանին տարակուսանք՝ քան ուս
մամբ։ Այլ հաշտեցուցանեն
զերկնային արքայութիւն ընդ զանու-
շահոտութի իմն։ Ունէին ասէ Տես 5. 8.
տեսիլն՝ իւրաքանչիւր ոք բուր-
վառ

վասն ասելն՝ լի խնկօք. որք են ա-
ղօթք սրբոց: Եւ զի ո՞վ ոք զօրեսցի
ճառել բաւականապէս մի առ մի
զզօրութիւն աղօթից՝ որ ի վեր
է քան զհասումն մտաց մերոց:
Արդ՝ ժամ է մեզ զյոգնադիմի
ներգործութիւն աղօթից թողուլ,
և ըստ չափու կարողութեան մերում
զհամառօտն խուզել: Քանզի
երկու են աղօթք՝ ըստ գրոց. մի
պտղաւէտ և անպտուղ: Եւ վասն
անպտղութեան ասէ տէր մարգարէ-
Եսայի իւն: Յորժամ յաճախիցէք յա-
1. 15. ղօթս՝ ոչ լուայց ձեզ. զի ձեռք
ձեր լի են արեամբ: Եւ սաղմոսն.
Սաղմոս Զմեղս թէ տեսանէի առ ի
65. 17. սրտի իմում, մի թէ լուէր ինձ տէր:
Յովհան Եւ ի յօհաննու. Գիտեմք զի
9. 13. Աստուած մեղաւորաց ոչ լսէ: Եւ յա-
Յակոբ կոբոս, Խնդրեսցէ հաւատով
1. 6. առ և մի երկմտեսցէ: Եւ զկնի

ասէ

տայ, զի որ երկմիտն է՝ նման է
հողմակոծելոց, և տատանելոց ալ-
եաց ծովու. և մի՛ երբէք ակըն-
կալցի մարդն այն առնուլ ինչ
յԱյ. Իսկ՝ պտղաւէտ աղօթք է
սրտին և ո՛չ շրթանց. և ո՛չ հայի
Ած 'ի բանս աղաչողին՝ այլ 'ի սիր-
տին. ո՛րպ ասէ առաջին Թագաւորու-
թեանց. Պատրաստեցէք զսիրտս 1 Թագ
ձեր առ Տր. և ծառայեցէք նմա 7. 3.
միայնոյ. Ուրեմն պարտիմք մեք՝
'ի բաց դնել զերկրաւոր ախոր-
ժակս. և ապա զգենուլ զԱծային
խոկմունս. Եւ այս օրինակի 'ի
սողոմոն. Նախ շինեաց զտա-
ճարն՝ և զարդարեաց. և ապա
աղօթեաց 'ի նմա. Նոյնպէս պար Դ ոտ-չա
տէ իւրաքանչիւր աղօթող, նախ 18. 13.
մաքրել զտաճար սրտի իւրոյ՝ յա-
մենայն խղճէ չարեաց՝ և ապա
աղօթել խոնարհական դիմօք.

որ

Եսթեր որպէս մաքառօղին: Եւ մաքուր
14. 3. փափագմամբ՝ որպէս եսթերայն:
Ելից Եւ ընդարձակ բարձանօք՝ որպէս
14. 25. Մովսէսին եւ Սադրաքէից. եւ
Գործ Առաքելոցն սրբոց. որք աղօթիւք
3. 1. զմեռեալս յարուցանէին. եւ զ'ի
9. 40. ծնէ կաղն գնացուցանէին. եւ այլ
նշանս եւ զօրութիւնս բազումս առ-
նէին. որ յայտ է 'ի վարս սրբոց
իւրաքանչիւրոյն: Եւ զի աղօթս
այս պաղատէմ՝ կրկին են. Հա-
սարակ. եւ Առանձին: Իսկ հա-
սարակն՝ որ 'ի սահմանեալ տեղին
կատարի. այսինքն յեկեղեցիս:
Եւ զի շինուած եկեղեցեաց 'ի
բազում մասանց՝ նշանակէ զմիա-
բանութիւն եւ զհամակամութիւն
աղօթողաց: Եւ ասէ զայսմանէ:
Մատթ. Տուն իմ տուն աղօթից կոչեսցի:
21. 13. Վասն զի եւ յեկեղեցւոջն դիւ-
րաւ լսելի լինին աղօթքն. որպէս
ասէ

ման Մնացորդաց: Աչք իմ եղի- 2 Մնա 7. 15.
ցին 'ի բաց և ականջք իմ 'ի լսել
զաղօթս այնմ, որ աղօթեսցէ 'ի
տեղւոջ յայսմիկ: Եւ զկնի ասէ,
ահա ընտրեցի զտունս զայս. և
սրբեցի զսա առ 'ի լինել անուան
իմոյ աստ զամ աւուրս. այսինքն
'ի լսել զաղաչանս աղօթողաց:
Եւ սաղմոսն թէ, Ահա օրհնե- Սաղմոս
ցէք ամ ծառայք տն զտէր: Եւ 133. 1.
թէ, Տան քում վայելէ սրբու- Սաղմոս
թի ընդ երկայն աւուրս: Եւ թէ 92. 6.
Յեկեղեցիս օրհնեցէք զած. և Սաղմոս 67. 26.
թէ՝ 'ի մէջ եկեղեցւոյ օրհնե- Սաղմոս
ցից: Եւ վասն քի ասէ ղուկաս: 22. 21.
Եւ ուսուցանէր զնո հանապազ Ղուկաս
'ի տաճարին: Այլև անդ գտեալ 19. 47.
եղև 'ի մօրէն. բաց այնմ, Ոչ Ղուկաս
գիտէք՝ թէ 'ի տան հօր իմոյ 2. 49.
պարտ է ինձ լինել: Որ ասէ ոս-
կեբերանն: Յատուկ է որդւոյն

տն

ույ հարագատի, զի ընդ մտանել
'ի քաղաքն՝ երթայր 'ի տուն Հօր
իւրոյ։ Այսպ̃ և մեք հետեւողքս
քի · ընդ մտանելն 'ի քաղաք ու-
րոք · պարտիմք գնալ յեկեղեցին
և կատարել զաղօթս հասարակաց։
Իսկ յայլ ուրեք որ ոչ իցէ եկե-
ղեցի · զի ուր և իցեմք՝ պարտիմք
զհասարակաց աղօթս կատարել
անյապաղ ։ Արդ՝ առանձնականն
աղօթք, կարէ լինել յեկեղեցիս
և յամ̃ ուրեք։ Բայց ուր և իցէ
զառանձնականն տեղիս պարտի ընտ-
րել · ըստ տեառն պատուիրանի ·
Մատթ. 6. 6, Յորժամ յաղօթս կայցես՝ մուտ
'ի սենեակ քո · և փակեա՛ զդրու-
նըս քո · մտանել 'ի սենեակն՝ է
զամփոփումն սրտին · և փակումն դը-
րանն՝ է փակումն զգայութեանց։
Եւ՛ ինքն քն յառանձին տեղւոջ
կատարէր զաղօթս իւր · զի և մեք
ուս

ուսեալք 'ի նմանէ՝ առանձին աղօ
թից առնել լինիցուք. ըստ այնմ թէ,
Ընդ այգն ընդ առաւօտն ել և Մարկ. 1. 39.
գնաց յանապատ տեղի՝ և անդ
կայր յաղօթս: Եւ թէ. Եւ 'ի Մատթ. 14. 23.
լեառն առանձին կայր յաղօթս:
Եւ թէ, Նստարուք այդր՝ մին- Մատթ. 26. 33.
չև երթայց կացից յաղօթս: Յա
ղագս որոյ՝ արարի զայս աղօթա-
րանս մշտամնացոյց. որ կոչի Ծա-
ղերս. հաւաքաբանեալ յեկեղե-
ցականց՝ և յընտանեաց աղօթից.
այսինքն 'ի սաղմոսացն դաւթի. 'ի
շարականացն մերոց. և 'ի խօսից մաղ-
թողականց սրբոյն Գրիգորի Նարեկա-
ցւոյն. և զամենայն յայլուստ. մինչ առ-
անձին կատարելոյ իւրաքանչիւրոյ
ուրուք աղօթասիրի 'ի մենարանի
իւրում: Եւ արդ գիտելի է, զի
գտանին 'ի սմա ուրեք ուրեք յեղա-
փոխութիւնք տառից. բառից. և բա-
նից

նից. նա և դիմաց և թռչնոց. որք
ոչ են այնպէս շարադրեցեալք ստա
ռոյ էին 'ի բնագիրս իւրեանց. այլ
ոմանք դրեցեալք. ոմանք բարձ-
եալք. և ոմանք փոխարկեցեալք
վասն երից հարկաւորաց պատճա-
ռաց: Այս զի ը պատշաճի առա
ջինկայ իրողութեան՝ հաւաքեցաք
զբանսն 'ի դրոց աստի և անտի և
կարգադրեցաք: Ուստի 'ի տեղիս
տեղիս ոչ լինէին ըստ քերթո-
ղականի արհեստի՝ և յարմարա-
գունին ոճով կարգադրուէին բա-
նիցն: Այլն իրի՝ զամենս տառս՝
կամ զբառս՝ և կամ զբանս՝ առա
դրեցաք ընդ այնպիսեաց. զի ար-
հեստաւոր՝ և քաղցրաձայն լինիցին:
Երկրորդ՝ սակս պատարանջատեց-
եալ դիտաւորութիս բանից ոմանց՝
առ միմեանս կցելոյ՝ միջարկեցաք
զբանս՝ և զխօսս վասն պատկանա-

ւո

հրութն տեղւոյն․ և մանաւանդ ջանք՝ և գիտմունք մեր այնք էին՝ համառօտ առնել զայս գիրք․ սակս ընթերցողաց ընդ երկեան կրելոյ՝ և նոցին մտաց դիւրըմբռնոցս լինելոյ․ Երրորդ՝ զի մի և թիւք փոխարկեցուք յառաջինն՝ 'ի դիմաց աղօթուցն եզականայս․ և երկրորդն՝ 'ի դէմս ոյ․ և զի որոյ պատճառէ աղօթօղն՝ վասն միայնոյ անձին է որ աղօթեսցէ առ ած յատկապէս։ Սակայն զտանի ես զամենս 'ի յաղօթամատոյցն․ յաղագս հասարակաց աղօթել 'ի դէմս մերցն․ և երբեմն 'ի դէմս ժողովրդոց խօսեցեալ։ Իսկ սա ոչ այնպէս․ այլ միայն 'ի դէմս ոյ խօսի․ և զմէն առ նա բարեխօս ունելով՝ նովին դիմաւորութբ։ Եւ պատճառք յեղափոխութեց 'ի սմա զտեցելոց՝ այսք էին զոր

բա

բացադրեցաք ընթերցողաց զգօ
նաւորաց եւ ոչ այլ ինչ. որպ թէ
զայս առնելով՝ քամահեցաք ըզ
շարադրութիւն սոյն բանից՝ եւ գոլե
լի զմեկրս արարաք։ որեւ քաւ մի
լիցի։ Իսկ սա այսպիսի անփոփաք
փոխադրութիք. այլոց շարադրծաց
'ի բանս Մարգարէից. Առաքելոց
Թարգմանչաց. Մեկնչաց. եւ
Վարդապետաց բազումք գոն.
որք՝ նրբամիտ եւ խորախնդիր ըն-
թերցողաց յայտնիք են։ Զոր
օրինակ Մովսէսի. Ամբակումայ.
եւ այլոց Մարգարէից բանքն.
որք են ութներորդ գուբղայք
'ի սաղմոսի անդ։ Այլեւ օրհնու-
թիւնք երից մանկանց. եւ սաղմն
եւ՝ այլեւայլապէս շարադրեցեալք
գոն. եւ յոծաշունչն այլազգաբար։
Բայց՝ յերկուսն նոյն են դիտ-
մունք. թէպէտ գոն յեղանա-
խու

խութիւնք 'ի բանս և 'ի տնտեսու-
թիւնս. և այս քաջայայտ իսկ է
ընթերցողացդ. Ուստի՝ ժամ
'ի բարեպաշտութե՟ցդ՝ անմեղա-
դրելի և զմեզ պահել. Եւ զայս
վերջապէս ևս գիտելի է՝ որ պար
տիմք մեք զկնի վասն մեր աղօ-
թելոյն՝ յօժարութեամբ խնդ-
րել զօժանդակութիւն ա՟յ վասն
երախտաւորաց մերոց. և վասն
ա՟մ աշխարհաց օգտի ըստ բա-
նի առաքելոյն. Եւ արդ՝ աղա- 1 Տիմօթ. 2. 1.
չեմ նախ քան զա՟մ՝ առնել ա-
ղօթս. խնդրուածս. պաղատանս.
գոհութիւնս՝ վասն ա՟մ մարդ-
կան. Մանաւանդ՝ վասն թագա-
ւորաց և ա՟մ իշխանաց. զի խա-
ղաղութ՟բ և հանդարտութ՟բ վա-
րեսցուք զկեանս մեր. ա՟մ ա՟ծ-
պաշտութ՟բ՝ և սրբութեամբ. Եւ
թէ՝ արդ՝ հատուցէք ամենե- Հռոմ. 13. 7.
ցուն

ցուն զպարտս. և այլն ։ Եւ ըստ
Սաղմ. 13. 7. սիրոյ քո, մի մոռանար զբարե-
կամս քո 'ի մտաց քոց. և յիշես-
ցես զնա 'ի գործս քո ։ այսինքն
յաղօթս ։ Ուրեմն՝ ընդունօղն
է բախտեաց, պարտի և գոհա-
նալ զերախտաւորաց ։ Յաղագս
որոյ հասարակաց և ամենից աշ-
խարհաց աղօթակերպ օրհնու-
թիւնս եդաք յաւարտ գրքոյս.
վասն երախտաւորաց և հասարա-
կաց պարտուցն հատուցման ։ Եւ
դուք սիրով հոգւոյն ով ջերմաց-
եալքդ. պաղատագրեցէք թա-
գաւորն սէրք յարքայութեն երկ-
նից. խառնելով զօրհնութիւնս
ձեր յօրհնութիւն հրեշտակաց ։
Յայնժամ և ինձ եղիցի մասն ը
ընտրելութեան ձերում եղբարք
Ամէն ։



Աշխարհահրաժարութիւն ի սատանայէ։

Հրաժարիմ ՚ի սատանայէ. և յամ խաբէ-
ութե՟ նր. ՚ի պատրանաց նր. ՚ի խորհրդոց նր.
՚ի գնացից նր. ՚ի չար կամաց նր. ՚ի չար
հրեշտակաց նր. ՚ի չար պաշտօնէից նր.
՚ի չար կամարարաց նր. և յամ չար զօ-
րութե՟ նր հրաժարելով հրաժարիմ։

Աշխարհադաւանութիւն և խոստովանութիւն առ Ած։

Գլուխ։ Ա։

# ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

և հաւատամ ամենակատար
սրտիւ զՀայր Ա՟ծ անեղ ան-
ծին և անսկիզբն։ Ա․յլ և ծնօղ
որդւոյ և բղխօղ հոգւոյն սրբոյ։
Հաւատամ զբանն Ա՟ծ։ անեղ
ծնեալ և էակից ՚ի Հօրէ նախ



1023 9109-57

քան զյաւիտեանս ։ Ո՛չ յետոյ
և ոչ կրտսեր։ Այլ որքան հայ
րըն հայր, ընդ նմին և որդին որ-
դի։ Հաւատամ զն՟ Հոգին
Ս՟բ՝ անեղ անժամանակ. ոչ
ծնեալ. այլ բղխեալ 'ի Հօրէ,
էակից Հօր՝ և փառակից որդւոյ։
Հաւատամ զերրորդութիւն ս՟բ՝
մի բնութիւն. մի Ա՟ծութիւն. ոչ
երեք ա՟ծք՝ այլ մի Ա՟ծ. մի կամ.
մի թագաւորութիւն. մի իշխա-
նութիւն. արարիչ երևելեաց և
աներևութից։ Հաւատամ յե-
կեղեցի ս՟բ զթողութիւն մեղաց
հաղորդութիւն սրբոց։ Հաւա-
տամ զմինն 'ի յերից անձանց զ-
բանն Ա՟ծ՝ ծնեալ 'ի Հօրէ նախ
քան զյաւիտեանս. 'ի ժամանա-
կի իջեալ յածածին կոյսն Մա-
րիամ։ Առեալ յարենէ նորա և
միաւորեցեր ընդ ա՟ծուե՟ քում.

իւն

իննամսեայ ժուժկալե՛լ յորովան
նի անարատ կուսին. և եղեր
Ածդ կատարեալ՝ մարդ կատա֊
րեալ. հոգւով. և մտօք. և մար֊
մնով. մի անձն մի դէմ. և միաւո֊
րեալ մի բնութիւն։ Ածդ մարդա֊
ցեալ առանց փոփոխման. առանց
այլայլութեան։ Անեղին յղու֊
թիւն և անապական ծնունդ։
Որ ոչ է սկիզբն Ածութեան
քոյ. և ոչ վախճան մարդկութե
քոյ։ Օի յս քս երէկ և այսօր՝
նոյն և յաւիտեան։ Հաւատամ
զՏէրդ իմ յս քս շրջեալ ’ի մէջ
երկրի. յետ երեսուն ամաց եկեր
’ի մկրտութին. Հայր ’ի վերուստ
վկայեաց դա է որդի իմ սիրելի.
և հոգին որ աղաւնակերպ իջեալ
’ի վերայ քո. և դու փորձեալ ’ի
սատանայէ. և յաղթեցեր նմա.
քարոզեցեր մարդկան դիւրկուն.

Աշխատեցար մարմնով· վաստա-
կեալ քաղցեալ և ծարաւեալ:
Յեւոյ եկեր կամաւ 'ի չարչա-
րանս· խաչեցար մեռար մարմնով·
և կենդանի ածութեամբդ:
Մարմնով եդեալ 'ի գերեզմանի
միաւորեալ ածութեամբդ· և հոգ-
ւովդ իջեալ 'ի դժոխս անբաժա-
նելի Ածութեամբդ· քարոզեալ հո
գւոցն աւերեալ զդժոխս և ազա
տեցեր զհոգիսն: Յետ երից
աւուրց յարեար 'ի մեռելոց· և
երեւեցար աշակերտաց քոց:
Հաւատամ զՏէրդ իմ յս քս
նովին մարմնովն համբարձար յեր
կինս և նստար ընդ աջմէ հօր:
Այլ գալոց ես նովին մարմնով
և փառօք հօր 'ի դատել զկենդա
նիս և զմեռեալս: Որ և յարու-
թիւն ամ մարդկան:
Հաւատամ և զհատուցումն գոր

ծոց

ծոց. արդարոցն կեանք յաւիտե
նականն. և մեղաւորացն տանջանք
յաւիտենականն:

Աղաչեմ զքեզ նշանաւ սրբոյ Խաչին ՔԻ.

Հայրդ որ ԱԾ ճշմարիտ սըր-
բեա՛ զմիտս իմ:
Որդիդ որ ԱԾ ճշմարիտ սըր-
բեա՛ զմարմինս իմ:
Հոգիդ որ ԱԾ ճշմարիտ սըր-
բեա՛ զհոգի իմ:
Ամենօրհնեալդ Սբ Երրորդու-
թի սրբեա՛ զգայարանս իմ և
Շնորհեա ինձ ՚ի հաճոյս քեզ
Աղօթել:

Աղօթք Աղաչանաց և ժամանակաց 'ի սաղմոսացն
Դաւթի: Հաւաքեցեալք շարայարեցեալ ըն
Գաղարու յամենայն ժամու Հայրապետէ Յակոբայ
երաշխաւոր եւրոց անձանց անձանց աղօթողաց.

Ալէլուեայ Ալէլուեայ.

Գլուխ Ա.

ԶԲԱՆՍ ԻՄ ՈՒնկնդիր տէր. և 'ի միտ առ զաղաղակ իմ:

Նայեաց 'ի ձայն աղօթից իմոց. թագաւոր իմ և ած իմ:

Ես զքեզ աղաչեմ տէր, ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում, ընդ առաւօտս պատրաստ եղէց՝ յանդիման լինել առ քեզ ած.

Տէր առաջնորդեա ինձ յարդարութե քում. վասն թշնամեաց իմոց՝ ուղիղ արա առաջի իմ զճանապարհս քո:

Հաստատեա զգնացս իմ 'ի ճանապարհի քում. զի մի գայթակղեսցին գնացք իմ: Ես

Ես առ քեզ տէր կարդացի. զի լուար ինձ ա̄ծ. խոնարհեցո այժմ առ իս զունկն քո և լուր բանից իմոց:

Դա՛րձ տէր՝ և փրկեա՛ զանձն իմ. կեցո՛ զիս՝ ըստ ողորմուե̄ քում:

Եւ՛ ողորմեաց ինձ տէր՝ զի հե-ծանեմ ես. բժշկեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ:

Ես յողորմութիս քո տէր յու-սացայ. զի ցնծասցէ սիրտ իմ 'ի փրկութեան քում, և օրհնեցից զտէր՝ զբարերարդ իմ:

Եւ՛ դու մի՛ սրտմտութե̄ քով յանդիմաներ զիս. և մի՛ բարկու-թեամբ քով խրատեր զիս:

Ա՛յ՝ լուր տէր արդարութե̄. և նայեաց 'ի խնդրուածս իմ. ուն-կնդիր աղօթից իմոց. զի ոչ շըր-թամբք նենգաւորօք:

Ցրեսայց քոյ խրախունքն ինձ եղ-ցեն.

ցեն. և աչք իմ՝ տեսցեն զուղ-
ղութիւն:

Լոյս տուր տ̃ր՝ աչաց իմոց. զի մի՛ երբէք ննջեցից ՚ի մահ:

Զի դու ես որ լուսաւոր առնես զճրագ իմ. տ̃ր ա̃ծ իմ՝ լոյս արա ինձ ՚ի խաւարի:

Զճանապարհս քո տ̃ր ցոյց ինձ, և զշաւիղս քո՝ ուսո ինձ:

Օրէնսդէտ արա զիս տ̃ր ՚ի ճանապարհի քում. և առաջնորդեա ինձ ՚ի շաւիղս քո ուղիղս:

Առ թշնամեաց իմոց. մի՛ մատ-նե՛ր զիս՝ ՚ի ձեռս նեղչաց իմոց:

Արդ՝ առ քեզ տ̃ր համբարձի զանձն իմ. ա̃ծ իմ ՚ի քեզ յու-սացայ. մի՛ ամաչեցից և մի՛ ծիծա-ղեսցին զինև թշնամիք իմ:

Այլ փրկեա զիս՝ ՚ի թշնամեաց իմոց հզօրաց. և յատելեաց իմոց. զի հզօրք եղեն քան զիս:

Եւ

Ե՛ւ պահեա՛ զիս իբր բիբ ական․ ընդ
հովանեաւ թեւոց քոց ծածկես-
ցես զիս․ յերեսաց ամբարշտաց՝
որք տառապեցուցին զիս։

Քանզի ես ՚ի քեզ Տէր յուսացայ՝
փրկեա՛ զիս․ և յամենից հալած-
չաց իմոց՝ ապրեցո՛ զիս։

Մի՛ բարձր եղիցի ձեռն քո․ և
մի՛ մոռանար՝ զտնանկս։

Ե՛ս յիշեմ զգթութիւն՝ և զողոր-
մութիս քո․ որք են յաւիտենից։

Զմեղս մանկութեան իմոյ՝ և զան-
գիտութեան իմոյ՝ մի՛ յիշեր․ այլ
յիշեա՛ զիս Տէր ըստ ողորմութեան
քում՝ վասն քաղցրութեան քո․
զի քաղցր և ուղիղ ես։

Ե՛ս դու Տէր՝ որ հաներ զիս յար-
գանդէ․ յոյս իմ՝ ՚ի ստեանց մօր
իմոյ։

՚Ի քեզ անկայ ես յորովայնէ՝
դու ես Աստուած իմ։

Մի՛ ՚ի բացեայ առներ զիս յե-նէն քո՝ զի նեղութիւնք մերձեալ են. և ոչ ոք է որ օգնէ ինձ։

Ուրեմն մի՛ հեռի առներ զօգ-նութիւն քո յինէն տէր, այլ օգնել ինձ նայեաց։

Ե՛ւ փրկեա՛ ՚ի սրոյ զանձն իմ. և ՚ի ձեռաց շանց՝ զմիամօրութիւն իմ։

Վասն այնորիկ պատմեցից զա-նուն քո՝ եղբարց իմոց. և ՚ի մէջ եկեղեցւոյ՝ օրհնեցից զքեզ։

Փառք հօր և որդւոյ և՛՛։

Աղօթք Աղջկանց և հաշտամատոյց ՚ի սաղմո-սացն դաւթի. Աղէլուեայ Աղէլուեայ։

Գլուխ. Է.

ՈՂՈՐՄՈՒ թիւն քո տէր զհետ իմ եկեսցէ, զամ աւուրս կենաց իմոց. բնակել ինձ ՚ի տան տն՝ ընդ եր-կայն աւուրս։

Ցուպ քո և գաւազան՝ նքա մխի-
թարեսցեն զիս.

Պահեա զանձն իմ, և փրկեա
զիս՝ և մի ամօթ եղէց, զի յուսա-
ցայ ի քեզ։

Լուր Տր ձայնի իմում՝ զի կար-
դացի առ քեզ. ողորմեաց ինձ՝
և լուր ինձ. զի քեզ բաղձացաւ
սիրտ իմ, և խնդրեցին երեսք իմ.
զերեսս քո Տր խնդրեցից։

Մի դարձուցաներ զերեսս քո
յինէն. և մի խոտորիր բարկութբ՝
ի ծառայէս քումմէ։

Մի կորուսաներ ընդ ամբարշտաց
զանձն իմ. և մի ընդ արս արիւ-
նահեղս՝ զկեանս իմ.

Եղէ օգնական իմ լեր Տր. մի
անարգեր զիս՝ և մի թողուր զիս՝
Այ փրկիչ իմ։

Լուր Տր ձայնի խնդրուածաց ի-
մոց՝ յաղաչել ինձ առ քեզ. ի
համ

համբառնալ ձեռաց իմոց՝ ՚ի տա-
ճար ս՛րբ քո։

Ե՛ղիցին քեզ հաճոյք բանք բերանոյ իմոյ. և խորհուրդ սրտի իմոյ առաջի քո յամ ժամ. տէր օգնական իմ՝ և փրկիչ իմ։

Սիրեցից զքեզ տ՛ր զօրութի իմ, տ՛ր հաստատիչ իմ՝ ապաւէն իմ՝ և փրկիչ իմ.

Ե՛ս ՚ի քեզ տ՛ր յուսացայ՝ մի ամաչեցից յաւիտեան, յարդարու-թեն քում՝ փրկեա և ապրեցո զիս։

Խոնարհեցո՛ առ իս զունկն քո. փութապէս կեցուցանել զիս։

Լե՛ր իմ ա՛ծ պաշտպան. և տուն ապաւինի. ապրեցուցանել զիս, զի հզօր ես իմ՝ և ապաւէն իմ դու ես։

Վ՛ն անուան քո առաջնորդես-ցես ինձ, և սնուսցես զիս՝ և հան-ցես զիս յորոգայթէ յայսմանէ՝ զոր թաքուցին ինձ։ Դու

Դու ես պաշտպան իմ Տէր. և
'ի ձեռս քո յանձն առնեմ զհո-
գի իմ։

Արդ՝ ողորմեաց ինձ Տէր՝ զի նե-
ղեալ եմ ես, խռովեցաւ 'ի սրտ-
մտութենէ ակն իմ՝ անձն իմ՝ և
փոր իմ։

Եղիցի ողորմութիւն քո Տէր 'ի
վերայ իմ՝ որպէս յուսացայ 'ի քեզ։

Եւ փրկեա՛ զիս 'ի ձեռաց թշնա-
մեաց իմոց. և 'ի հալածչաց իմոց։

Երևեցո՛ զերեսս քո 'ի ծառայս
քո. ապրեցո՛ զիս Տէր ըստ ողոր-
մութեան քում. և մի՛ յամօթ ե-
ղէց՝ զի կարդացի առ քեզ։

'Ի քէն է Տէր աղբիւր կենաց. և
լուսով երեսաց քոց տեսանեմ
զլոյս։

Ձգեա՛ զողորմութիւն քո յիս,
զի ճանաչեմ զքեզ. և զարդա-
րութիւն քո՝ զի ուղիղ եղէց
սրտիւք։

Մի՛ եկեսցեն ՚ի վերայ իմ ոտք ամբարտաւանձանեից· և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զիս:

Մի՛ թողուր զիս տ̃ր ա̃ծ իմ· և մի՛ ՚ի բացէ առնէր յինէն: Հայեա՛ց յօգնել ինձ տէր փրկութեան իմոյ:

Քանզի ՚ի քեզ յուսացայ, և դու լուիցես ինձ տ̃ր ա̃ծ իմ:

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ· և ո̃պ բեռն ծանր՝ ծանրացան ՚ի վ̃ր իմ:

Նեխեցան և փտեցան վէրք իմ, յերեսաց անզգամութեան իմոյ:

Խոնարհեցաւ մինչև ՚ի հող անձն իմ· և յերկիր կցեցաւ մէջ իմ:

Ուրեմն դու տէր մի՛ հեռի առներ զգթութիւն քո յինէն· զի ողորմութիւն քո՝ և ճշմարտութիւն քո յամ̃ ժամ ընկալցին զիս:

Առաքեա՛ տ̃ր զլոյս քո և զճշմար

տու

տութիւն քո. զի առաջնորդես-
ցեն ինձ. և հանցեն զիս ’ի լեառն
սբ̄՝ և ’ի յարկս քո

Ե՛ս խոստովան եղէց քեզ
օրհնութբ̄ ած̄ ած̄ իմ:

Փառք հօր և որդւոյ և հո՛՛:

Աղօթք [illegible] և [illegible] ’ի սաղմո-
սացն Դաւթի. [illegible]

Գլուխ. Է̄.

# ԱԾ ԻՄ ՆԱՅ

եայց առ իս. ընդէ՞ր թո-
ղեր զիս. հեռի եղէ ’ի փրկութ̄է
իմմէ՝ վն̄ բանից յանցանաց իմոց:
Ողորմութ̄ի քո ի՛ր՝ առաջի աչաց
իմոց. և հաճոյ եղէց ճշմարտու-
թե̄ քում:

Զարթի՛ր ընդդէ՞մ նենգես տր̄.
արի և մի՛ մերժեր զիս իսպառ:
Տէ՛ր տր̄, օգնեա ինձ. և փրկեա
զիս վն̄ անուան քոյ. Ողոր

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում, քաւեա զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. եւ ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիւն իմ ես ինքնին գիտեմ. եւ մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ ես. եւ չար առաջի քո արարի։

Որպէս արդար երեւեսցիս ի բանս քո. եւ յաղթեսցես ի դատել քո։

Անօրէնութեամբ յղացայ. եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու որ զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս եւ զծածկեալս, իմաստութեան քո յայտնեցեր ինձ։

Ցօղեա յիս մշտկաւ, եւ սուրբ եղէց. լուա, եւ քան զձիւն սպիտակ եղէց.

Լսելի արա՛ ինձ տր զցնծութի՛ւն և զուրախութիւն. զի ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զես տր 'ի մեղաց իմոց · և զամ անօրէնութիս իմ քաւեա՛ յինէն։

Օ սիրտ սբ հաստատեա՛ յիս ած, և զհոգի ուղիղ նորոգեա՛ 'ի փորի իմում։

Մի՛ ընկեցուր զիս տր յերեսաց քոց · և զհոգի սբ քո մի՛ հաներ յինէն։

Այլ տո՛ւր ինձ զցնծութի փրկութե քոյ · և հոգւով պետութե քո հաստատեա՛ զիս ։

Ուսո՛ անօրինաց զճանապարհս քո · և ամբարիշտս առ քեզ դարձայց։

Փրկեա՛ զիս յարենէ ած՝ ած փրկութե իմոյ. զի ցնծասցէ լեզու իմ յարդարութե քում ։

Ած յանուա՛ն քում կեցո՛ զիս, և

'ի զօրութեան քում իրաւ արա՛ ինձ։
Ած՝ լուր աղօթից իմոց. ունկն դիր բանից բերանոյ իմոյ։
Յամ նեղութենէ իմմէ փրկե-ցեր զիս. և 'ի թշնամիս իմ ետես ակն իմ։
Ողորմեա՛ ինձ Ած՝ ողորմեա՛ ինձ. զի 'ի քեզ յուսացաւ անձն իմ։
'Ի հովանի թևոց քոց յուսա-ցայց. մինչև անցցէ անօրէնութիւն։
Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց Ած, յայնցանէ որք յարուցեալք են 'ի վերայ իմ։
Փրկեա՛ զիս յայնցանէ, որք գործեն զանօրէնութիւն. և յարանց արիւնահեղաց ապրեցո՛ զիս։
Որք որսալ զանձն իմ կամեցան. և հասին 'ի վերայ իմ հզօրագոյնք։
Տո՛ւր ուրեմն ծառայիս քո զնը-շան. զի ապրեցիմ յերեսաց ա-ղեղան։

Որ

Որպէս փրկեցեր զսիրելիսն քո․ նոյ պէս կեցո՛ զիս աջով քով, եւ լո՛ւր ինձ։

Դու տո՛ւր ինձ զօգնութիւն 'ի նեղութե՛ն․ զի ընդունայն է փըր. կութիւն մարդոյ։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ՛՛։

Աղօթք Ապաշխարողաց եւ մեղաւորաց 'ի սաղմո. սացն Դաւթի։ Ալէլուեայ Ալէլուեայ։

Գլուխ . Ե.

ԼՈՒՐ Ա̃Ծ ԱՂՕթից իմոց․ եւ նայեաց ընդ յաղօթս իմ։

Ընակեցայց ես 'ի յարկս քո յաւի տեանս․ եւ ծածկեցայց ընդ հովա. նեաւ թեւոց քոց։

Իսկ արդ ո՞վ է համբերութիւն իմ, թէ ո՛չ դու տէր․ կամ կար ողութիւն իմոյ՝ թէ ո՛չ 'ի քէն։ Պանդուխտ եմ ես առաջի քո,

նըժ

նժդեհ և անցաւոր, որպէս ամենայն հարք իմ։

Լուր տ՟ր աղօթից իմոց· ունկն դի՛ր խնդրուածաց իմոց՝ արտասուաց իմոց մի՛ լռեր։

Ա՟ծ իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ· ծարաւեցաւ առ քեզ հոգի իմ· քանիպատիկ եւ և մարմին իմ։

Ո՛ւնկնդիր աղօթից իմոց· և մի՛ անտես առներ զխնդրուածս իմ։

Ա՟ծ իմ, մի՛ հեռի առներ զիս յինէն· և ա՟ծ յօգնել ինձ նայեա՛ց։

Լուր տ՟ր աղօթից իմոց· զի առ քե՛զ ա՟մ մարմին եկեսցէ։

Բանք անօրէնաց զօրացան ՚ի վերայ իմ· և զամբարշտութիւնս իմ՝ դու քաւեսցես։

Ա՟ծ ողորմեա՛ց ինձ՝ և օրհնեա՛ զիս· երևեցո՛ զերեսս քո յիս՝ և ողորմեա՛ց ինձ։

Կեցո՛ զիս ա̃ծ, զի հասին ջուրք յանձն իմ. ընկլայ 'ի խորս անդն-դոց. ուր ո՛չ գոյ ինձ հանգիստ:
Եկի ես 'ի խորս ծովու. և շըր-ջանք ընկղմեցին զիս:
Ա̃ծ դու ծանեար զանզգամութի̃ւն իմ և յանցանք իմ 'ի քէն ո՛չ ծածկեցան:
Ա̃ծ 'ի բազում ողորմութե̃ քում լո՛ւր ինձ. 'ի ճշմարտութեան փրկութեան քոյ:
Ապրեցո՛ զիս 'ի կաւո՛յ՝ զի մի՛ ընկ-ղայց. ապրեցայց ես յատելեաց իմոց. և 'ի խորոց ջուրց բազմաց:
Մի՛ ընկլցէ զիս պտոյտք ջուրց. և մի՛ ընկղմեսցեն զիս անդունդք խորոց. և ջրհոր մի՛ կափուսցէ զբերան իւր 'ի վերայ իմ:
Լո՛ւր ինձ տ̃ր, զի քաղցր է ողոր-մութիւն քո. ըստ բազում գը-թութե̃ քում հայեա՛ց յիս, և մի՛

դար

դարձուցանել զերեսս քո 'ի ծառայէ քումմէ, զի նեղեալ եմ ես, վաղվաղակի լո՛ւր ինձ։

Նայեա՛ց յանձն իմ, և փրկեա՛ զիս. և վասն թշնամեաց իմոց ապրեցո՛ զիս։

Աղքատ և ցաւած եմ ես. փրկութիւն քո Ած ընկալցի զիս։

Ած յօգնել ինձ նայեա՛ց. և Տր յընկերել ինձ փութա՛։

Ես աղքատ և տնանկ եմ, Ած օգնեա՛ ինձ. զի օգնական և փրկիչ իմ ես դու. Տր մի յամենար։

Եղե՛ր իմ Ած ապաւէն, և տեղի ամուր կեցուցանել զիս. զի հաստատութիւն իմ և ապաւէն իմ դու ես

Ած իմ, փրկեա՛ զիս 'ի ձեռաց մեղաւորի. 'ի ձեռաց անօրինի և անիրաւի։

Դու ես համբերութիւն իմ Տէր՝

Տր

տր̃ յոյս իմ 'ի մանկութ̃է իմմէ.
'Ի քեզ հաստատեցայ ես յար-
գանդէ. յորովայնէ մօր իմոյ դու
ես ապա՛ւէն իմ. և առ 'ի քէնէ
օգնութ̃ի իմ յամ̃ ժամ̃:
Ոպ̃ զի նշաւ՛ակ եղէ ես բազմաց.
և դու օգնական իմ և հզօրիչ իմ:
Լցցի բերան իմ գոհութ̃բ, և
օրհնեսցին զփառս քո. զօրհնա-
պաշտ զմեծ վայելչութիւն քո:
Եւ դու մի՛ ընկենուր զիս տէր
'ի ժամանակս ծերութ̃ե. 'ի պա-
կասել զօրութեան իմոյ մի թո-
ղուր զիս:
Մինչև յալևորիլ և 'ի ծերանալ
իմում. ա̃ծ իմ մի թողուր զիս:
Փառք հօր և որդւոյ և հո՛՛:

Աղօթք Աշխարհաց եւ ժամանակաց ՚ի սաղմո-
սացն փառօքն. Աշխարհական Աշխարհական:

Գլուխ. Դ.

# ՊԱՏՐԱՍՏԷ

սիրտ իմ Ած · պատրաստ եղեւ սիրտ իմ, յօրհնել եւ սաղմոս ասել քեզ փառօք իմովք։

Այսպէս սաղմոս ասացից անուան քում յաւիտեանս յաւիտենից. եւ տաց քեզ զաղօթս իմ օր ըստօրէ:

Խոստովան եղէց առ քեզ Ած, խոստովան եղէց եւ կարդացից զանուն սուրբ քո:

Ցնծեա՛ զժողովուրդ քո, զոր ըստացար ՚ի սկզբանէ · եւ փրկեցեր զվիճակ ժառանգութեան քո:

Հայեա՛ց յուխտ քո · զի լցան տունք ափիշելոց յերկրի անիրաւութեամբ:

Աստծ, մինչ հեթանոսք ՚ի ժառան

գու

գուն̄ քո. և պղծեցին զտճ̄ր սբ̄ քո:
Եղէ ես նախատինք դրացեաց իմոց. ծաղր և այպն կատականաց այնոցիկ որք շուրջ էին զինև:
Մի յիշեր զմեղս իմ զառաջինս. վաղվաղեսցէ առ իս ողորմութի̄ քո Տ̄ր, զի աղքատացայ յոյժ:
Օգնեա ինձ Ա̄ծ փրկիչ իմ. վ̄ս փառաց անուան քո:
Տ̄ր փրկեա զիս՝ և քաւեա ըզ մեղս իմ վասն անուան քո:
Մի երբէք ասասցեն ՚ի հեթա-նոսս. թէ ո՞ւր է Ա̄ծ նորա:
Ա̄ծ զօրութ̄եց, դարձո՛ զիս, ե-րեւեցո՛ զերեսս քո յիս՝ և կեցից:
Ա̄ծ զօրութ̄եց՝ դարձ՛ հայեաց յերկնից՝ և տես. այց արա այգ-ւոյս այսմիկ. և դարձման տո՛ւր սմ-մա, զոր տնկեաց աջ քո:
Դարձ առ իս Ա̄ծ փրկիչ իմ. և դարձո՛ զայրամտութի̄ս քո յինէն:

Մի

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ Տէր. և մի՛ ձգեր զբարկութիւն քո յազգէ մինչև յազգ։

Ցո՛յց ինձ Տէր զողորմութիւնս քո. և զփրկութիւնս քո տո՛ւր ինձ։

Խոնարհեցո՛ ականջ զունկն քո, և լո՛ւր ինձ. զի աղքատ և տնանկ եմ ես։

Պահեա՛ զանձն իմ, սուրբ Տէր. և փրկեա՛ զծառայս քո, Աստուած իմ՝ որ ՚ի քեզ յուսացայ։

Ողորմեա՛ ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայիս քո. զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։

Զի դու Տէր քաղցր և ուղիղ ես. բազումողորմ առ ամենեսին, որք կարդան առ քեզ։

Ունկնդիր Տէր աղօթից իմոց. և նայեա՛ց ՚ի ձայն խնդրուածոց իմոց։

Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ՝ և լուա՛ր ինձ։ Մեծ

Մեծ ես դու Տէր և առնես սքան
չելիս. և դու միայն ես Աստուած։
Խոստովանեցայց քեզ Տէր Աստուած
իմ բոլորով սրտիւ իմով. և փառա
ւորեցից զանուն քո յաւիտեանս։
Եւ դու Տէր Աստուած իմ, գթած ես և
ողորմած, երկայնամիտ՝ բազում
ողորմ՝ և ճշմարիտ. նայեաց յիս
և ողորմեաց ինձ։
Տուր զզօրութիւն ծառայիս քո. կե
ցո զորդի աղախնոյ քո. և արա առ
իս նշան բարութեան։
Տեսցեն ատելիք իմ և ամաչես
ցեն. զի դու Տէր օգնեցեր ինձ և
մխիթարեցեր զիս։
’Ի քեզ Տէր յուսացայ, մի ամաչե
ցից յաւիտեան. յարդարութեան
քում փրկեա և ապրեցո զիս։
Օրհնեալ Տէր Աստուած յաւիտեանս
յաւիտենից՝ եղիցի եղիցի։
Փառք Հօր և Որդւոյ և Հո՛.

Աղօթք Աճաշերս և մաղթանաց 'ի սաղմո-սացն Դա̃թի։ Ալէլուեայ Ալէլուեայ։

Գլուխ. Է.

ՄՏՑԷՆ Ա-ղօթք իմ առաջի քո տ̃ր խո-նարհեցո ունկն քո 'ի խնդրուա-ծս իմ։

Տէր լուր աղօթից իմոց. և աղա-ղակ իմ առ քեզ եկեսցէ. մի դար-ձուցաներ զերեսս քո յինէն։

Յաւուր նեղութ̃ե իմոյ խոնար-հեցո առ իս զունկն քո. յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղ-վաղակի լուր ինձ. Ա̃ծ իմ ես դու և խոստովան եղէց քեզ. ա̃ծ իմ ես դու՝ և բարձր արարից զքեզ։

Իմաստո՛ւն արա զիս տ̃ր. և քն̃-նեցից զօրէնս քո. և պահեցից զնա բոլորով սրտիւ իմով։

Եկեսցէ 'ի վերայ իմ ողորմութ̃ի քո տ̃ր. և փրկութ̃ի քո ը̃ բանի քում։

Քաղցր ես դու Տէր. և քաղցրութեամբ քով ուսո ինձ զարդարութիւնս քո։

Ձեռք քո արարին՝ և ստեղծին զիս. իմաստուն արա զիս՝ և ուսայց զպատուիրանս քո։

Բևեռեա ընդ երկիւղ քո ըզ մարմին իմ. զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։

Մերձեցաւ անձն իմ 'ի հող. Տէր կեցո զիս ըստ բանի քում։

Ընկալ զծառայս քո 'ի բարի. զի մի ամբարտաւանք զրպարտեսցեն զիս։

Արա ընդ ծառայիս քում Տէր՝ ըստ ողորմութեան քում. զարդարութիւնս քո ուսո ինձ։

Ծառայ քո եմ ես, իմաստուն արա զիս, և ծանեայց զվկայութիւնս քո։

Երևեցո զերեսս քո 'ի ծառայս քո, և ուսո ինձ զարդարութիւնս քո։

Կեց

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զ.քեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ:

Մոլորեցայ ես ոպ՟ ոչխար կորուսեալ. խնդրեա զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ:

Առ քեզ տէր համբարձի զաչս իմ. որ բնակեալդ ես ՚ի յերկինս:

Ոպ՟ աչք ծառայի ՚ի ձեռն տն՟ իւրոյ. և որպէս աչք աղախնոյ, ՚ի ձեռն տիկնոջ իւրոյ:

Այնպէս են աչք իմ առ քեզ տր՟ ած՟ իմ. մինչև ողորմեսցիս ՚ի վերայ իմ

Ողորմեա՛ց ինձ տէր ողորմեա՛ ինձ. զի բազում լցայ արհամարհանօք:

՚Ի խորոց կարդացի առ քեզ տր՟ տր՝ լո՛ւր ձայնի իմում:

Եղիցին ականջք քո ՚ի լսել զձայն աղօթից իմոց:

Թէ զանօրէնութիւնս իմ քննես տր՟. տր՝ ո՞վ կարէ կալ առաջի

քո

քո. զի ՚ի քէն է քաւութիւն։

Խոստովան եղէց քեզ Տէր, բոլորով սրտիւ իմով. առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ։

Զի լուար զբանս բերանոյ իմոյ. երկիրպագից ՚ի տաճար սուրբ քո. և խոստովան եղէց անուան քում վա՟ ողորմութե՟ և ճշմարտութեան քոյ։

Մեծ արարեր յա՟մի զանուն սբ քո. յորում աւուր կարդամ առ քեզ, վաղվաղակի լուր ինձ. և բազում արասցես զզօրութիւնս յանձն իմ։

Տր ողորմութի՟ քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի անտեսառներ։

Ապրեցո զիս Տէր ՚ի մարդոյ չարէ. յառնէ անիրաւէ փրկեա զիս։

Պահեա զիս Տէր ՚ի ձեռաց մեղաւորի. և ՚ի մարդոյ չարէ փրկեա զիս։

Որ

Մ՛ի մատներ զիս Տէր 'ի ցանկու-
թիւն մեղաւորաց, որք խորհե-
ցան վասն իմ. և մի՛ ընդ վայր հար-
կաներ զիս.

Փառք Հօր և Որդւոյ և Հո՛:

Աղօթք Աղաչանաց և ապաշխարութեան 'ի սաղմո-
սացն Դաւթի. Ալէլուիա Ալէլուիա:

Գլուխ. Ը.

ԽՈՆԱՐՀԵՑՈ զսիրտ իմ 'ի վկայութիւնս քո Տէր. և մի՛ յագահութիւն:

Դարձո՛ զաչս իմ, զի մի՛ տեսցեն զնանրութիւն. 'ի ճանապարհս քո կեցո՛ զիս:

Հաստատեա՛ ծառայի քում զբան քո յերկիւղ քո:

Մե՛ մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր. ըստ բանի քում իմաստուն արա զիս.

Մտցեն աղօթք իմ առաջի քո

տր. և բանիւ քով փրկեա զիս։
Լուր տէր աղօթից իմոց յաղաչել ինձ առ քեզ. յերկիւղէ թշնամւոյն փրկեա զանձն իմ։
Խոնարհեցո առ իս զունկն քո՝ և կեցո զիս։
Տէր կարդացի առ քեզ՝ և լուր ինձ, նայեաց 'ի ձայն աղօթից իմոց՝ 'ի կարդալ իմում առ քեզ։
Ուղղիղ եղիցին աղօթք իմ ոպ խունկ առաջի քո տր. համբարձումն ձեռաց իմոց՝ պատարագ երեկոյի։
Դիր տէր՝ պահապան բերանոյ իմոյ. և դուռն ամուր՝ շրթանց իմոց. զի մի խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան։
Պահեա զիս յորոգայթէ, որ թագուցան ինձ. 'ի գայթակղուէ գործողին զանօրէնութիւն։
Աղաղակեցի առ քեզ տէր՝ և

ասացի, դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։

Տէր հան 'ի բանտէ զանձն իմ․ գոհանամ զանուանէ քումմէ։

Տէր լո՛ւր աղօթից իմոց․ ո՛ւնկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն․ նմանիցիմ այնոցիկ, որք իջանեն 'ի գուբ։

Լսելի՛ արա ինձ յառաւօտու զողորմութի՛ս քո․ զի ես 'ի քեզ տէր յուսացայ։

Ցո՛յց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից․ զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տ̄ր․ զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո․ զի դու ես ա̄ծ իմ։

Հոգի քո ո̄ք և բարի՝ առաջ-

նոր

Նորոգեսցէ ինձ յերկիր ուղիղ։

Օրհնեալ ես դու տէր. ուսո ինձ զարդարութիւնս քո։

Շրթամբք իմովք պատմեցից զա՛մ իրաւունս բերանոյ քո։

Հատո՛ ծառայի քում՝ զի կեցից, և պահեցից զբանս քո։

Զարթո՛ զաչս իմ, և նայեցայց ՚ի սքանչելիս օրինաց քոց։

Պանդուխտ եմ ես յերկրի. մի թագուցաներ յինէն զպատուիրանս քո։

Զճանապարհս մեղաց ՚ի բա՛ց արա յինէն. և յօրէնս քո ողորմեա՛ց ինձ։

Արդ ՚ի բա՛ց արա յինէն զնախատինս և զարհամարհանս. զի զվկայութիւնս քո խնդրեցի։

Յիշեա՛ զբան ծառայի քո, յոր և յուսացուցեր զիս։

Տէ՛ փրկեա՛ զանձն իմ ՚ի մահուանէ

ուժանէ. զաչս իմ յարտասուաց, և զոտս իմ ՚ի գայթագղութէ. հաճոյ եղէց առաջի տն յերկրին կենդանեաց:

Փառք հօր և որդւոյ և հն̃:

Աղօթք Ապաշխարութեան և Խոստովանութեան Մանասէի Արքային Իսրայէլի:

Գլուխ. Թ.

ՏԱՄՆՆԱԿԱԼ, տծ աբրահամու՝ իսահակայ՝ և յակոբայ՝ և զաւակին նց արդարոց. ամենակալ տր՝ թող րղ մեղս իմ:

Որ արարեր զերկինս՝ և զերկիր, և զամ՝ զարդ նոցա. ամենակալ:

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քոյ. փակեցեր զխորս, և կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով. ամենակալ:

Որ

Որ ամենայն ինչ սարսի և դողայ յերեսաց ահեղ զօրութեան քո․ ամենակալ տէր՝ թո՛ղ։

Անբաւ է մեծ վայելչութիւն փառաց սրբոց քո․ և սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոց՝ ՚ի վերայ մեղաւորաց․ անչափ և անքննելի են ողորմութիւնք աւետեաց քոց․ ամենակալ։

Դու տէր՝ բարձրեալ՝ գթած, երկայնամիտ, բազումողորմ․ և զղջանաս ՚ի վր̃ չարեաց մարդկան․ ամենակալ։

Դու ած՝ ո՛չ եդեր ապաշխարութիւն արդարոյն, աբրահամու, իսահակայ՝ և յակոբայ․ որք ո՛չ մեղան քեզ․ ամենակալ։

Այլ եդեր ապաշխարութիւն ինձ իմ մեղաւորիս․ զի մեղայ առաւել քան զաւազ ծովու․ և բազմացան անօրէնութիւնք իմ․ ամենակալ։

Զիմ

Չեմ արժանի հայել՝ և տեսա-
նել զբարձրութիւնս երկնից, 'ի
բազմութենէ անօրէնութեան իմոյ.
ամենակալ։

Կորացեալ եմ ես 'ի բռնութէ
կապանաց երկաթից. և ոչ գոյ
ինձ հանգիստ. ամենակալ։

Բարկացուցի զողորմութիւն. և
զչար առաջի քո արարի. կանգնե-
ցի զպատկեր մեղաց՝ և բազմացու-
ցի զցասումն. ամենակալ։

Ես արդ տէր՝ խոնարհեցուցա-
նեմ զծունկս սրտի իմոյ՝ և հայ-
ցեմ 'ի քաղցրութենէ քումմէ.
ամենակալ։

Մեղայ՝ տէր, մեղայ, և զանօրէ-
նութիւնս իմ ես ինձէն գիտեմ.
ամենակալ։

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն՝
թող ինձ տէր, թող ինձ. և մի
կորուսաներ զիս ընդ անօրէնու-
թեան

թեան իմոյ. ամենակալ։

Մ'ի յաւիտեան բարկանար ինձ տէր, և մի յիշէր զչարիսն իմ. և մի պարտաւորէր զիս ընդ իջեալսն 'ի ներքոյ երկրի չարեօք. ամէն։

Զի դու ած՝ ած ապաշխարողաց ես. և յի՛ս ցոյց զբարերարութիւնդ քո, զի անարժան եմ. ամէն։

Կեցուսցե՛ս զիս ըստ բազում ողորմութե քում. և օրհնեցից ըզքեզ զամ աւուրս կենաց իմոց. ամենակալ.

Զքեզ տր՝ օրհնեն ամ զուա́րթունք երկնից. և քո են փառք յաւիտեանս ամէն։

Փառք հօր, և որդւոյ, և հոգ''։

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն տր թո՛ղ ինձ զմեղս իմ։

Ողորմ ողորմ տէր, ողորմեա՛յ ինձ։

Ա՛ծ քաւեա՛ զիս զմեղաւորս.

Արա

Արարիչ իմ և յոյս ած, գթա՛ յիս 'ի մեղուցեալ ծառայս. և ողորմեա՛ ինձ բազմամեղիս:

Ո՛րդի տր ամենախնամող. ընկա՛լ զաղաչանս իմ. զի 'ի քեզ է ապաւինեալ անձն իմ.

Յաղթող զօրութբ՝ տր և կենդանարար՝ և պատուական խաչիւ քով տր՝ պահպանեա՛ զիս:

Առաքեա՛ տր զհրեշտակ խաղաղութեան քո. որ եկեալ պահեսցէ զիս անխռով 'ի տուէ և 'ի գիշերի:

Եւ մարդասիրութբ քով յիշեա՛ զիս տր, յիշեա՛ զիս. յորժամ գաս արքայութբ քով, և ողորմեա՛ց ինձ:

Աղօթք:

ՏՐ ած փրկութեան իմոյ՝ որ ողորմած ես և գթած. երկայնամիտ բազումողորմ և զզջանաս 'ի վր չարեաց մարդկան: Որ ոչ

կա

կամիս զմահ մեղաւորին. այլ ըզ-
դառնալ նորա 'ի չար ճանապար-
հէն եւ զկեալն: Դու տէր առատ
ողորմութեան քոյ մխիթարեա՛ ըզ
ծառայս քո՝ եւ տուր խնամեա՛ զնա ա-
պաշխարութեան: Հաշտեա՛ մարդա-
սիրութեամբ քով. եւ արա՛ զնա անդամն
եկեղեցւոյ քում սրբոյ: Առ զնա ա-
ռաջնական հօտովդ խառնեա-
նուք եւ ապաշխարութեամբ մաքրեա յե-
կեղեցի քո՛ւմ: Ե՛ւ ընդ ժողովր-
դեան քում քեզ հանեսցէ զօրհ-
նութիւն եւ զփառս Հօր եւ Որդ-
ւոյ եւ Հոգւոյդ սրբոյ. Այժմ, եւ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտե-
նից Ամէն:

Մաղթանք

Սաղմոսիւք եւ օրհնութեամբ՝
եւ երգօք հոգեւորօք. անդադար
փառաւորեմ զՀայրդ եւ զորդիդ
եւ

և զսբ հոգիդ. այժմ և միշտ՝ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Երգս օրհնութե՛ն և 'ի ձայն սաղմոսաց՝ անդադար փառաւորեմ զՀայրդ և զՈրդիդ և զսբ Հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Հայր մեր՝ որ յերկինս ես՚՚։

Աղօթք Ամփոփեալք և համառօտեալք 'ի սբ Հօրն Գրիգորի Նարեկացւոյն։
Համաձայնեցմամբ շարայարեցելու Տեառն Պ. ղարոս յամենեցունց Համառօտեալ։
Յաղագս խորախոհ խորոց անհասից աղօթողաց։

## Գլուխ. Ժ.

ԵՒ ԱՐԴ ԴՈՒ միայն սկզբն բարեաց՝ գթութի՛ անձառ՝ որդի բարձրելոյն ամ Հօր։ Համբե՛ մաքրեալ
Գ թագ. 15. 4. ուխտարիս։ Տէ՛ր աղաւնինեալ ծառայիս։ Գթեա՛ անպարտ՝ մեծ սրտ

մտ

մեյել լոյս։ Սպեղանեաց դեղ՝ վի- Գործ․
րաւորեցել լոյս։ Նշաստուէ՝ մեղօք 10․ 34․
դրաւեցել լոյս։ Օրհնութիւն բա-
րեաց՝ մերժեցել լոյս։ Անէք շնոր-
հաց՝ խոտեցել լոյս։ Ծնունդ կոչ-
ման՝ կապտեցել լոյս։ Կանգնումն
վերստին՝ կործանեցել լոյս։ Պա-
տրպարան հզօր՝ դլորեցել լոյս։
Օժանդակ վեհ՝ դայթագղեցե-
լոյս։ Դուռն բարձրութեան՝ տա- Ծննդ․
բակլուսել լոյս։ Սանդուխք երանու- 28․ 12․
թեան՝ եղկել լոյս։ Ճանապարհ շաւ- Յովհ․
ղաց՝ մոլորեցել լոյս։ Թագաւոր 14․ 6․
նեբօղ՝ պաքուեցել լոյս։ Քաղցր
յուսադրութիւն՝ լքեցել լոյս։ Ձե-
ռնկալ կենաց՝ հերքեցել լոյս։
Ամէն միայն և ամենատատ։
Եր գլխութիւն բարեաց սահմա- Եփես․
նեալ, հեղուս անչափ յաճախու- 3․ 20․
թիւն՝ քան զոր խնդրեմք և խմա-
նամք, ըստ պօղոսի գոհաբանութեան։
Ահա

Ո՛վ առ չարութեան գերելոյս, բարութիւն քո: Ով մահապարտս դատնութեան, քաղցրութիւն քո: Ով կորուսելոյս յայտնութեան, ճառագայթ քո: Ով յանդգնելոյս մաքրութի, ողորմութեան քո: Ով խոնարհութի ճանապարհիս, հեզութի քո: Ով կործանեցելոյս
Մատթ. այցելութի, աջ քո: Ով ընկղմե-
14. 30. ցելոյս ի փրկութեան ձեռն քո:
Մարկ. Ով բժշկութի անողջանալի խոց-
7. 33. ոտածոյս, մատն քո: Ով պակուցե-
լոյս պաշտպանութեան, հոգի քո:
Ով ծնունդ ամենայն անհնարինելիս, գո-
Ղուկ. րութեան քո: Ով մեղաւորաց քա-
7. 48. ւութեան, հրաման քո: Ով վա-
խացելոյս ապաւինութեան, սէր քո: Ով փախստելոյս առաջնորդութեան, լոյս քո: Ով տարակուսելոյս հնարաւորութի, հանճար քո: Ով անխծեցելոյս կենդանութեան մեծ

Ով

օրհնութիւն քո: Որ վհատեցե-
լոյս քաջալերութի՛, իրս խոյս քո:
Որ վշտագնեցելոյս մխիթարութի՛,
բաժակ քո: Որ նեղեցելոյս ընդ-
արձակումն կամ քո: Որ ատեցե-
լոյս կոչումն, սէր քո: Որ հա-
լածել վիրաւորեցելոյս, կաթուած
արեան քո: Որ անկրելոյթ մը-
թերս ցաւոց, ակնարկութիւն քո:
Որ յուսահատեցելոյս անդրէն
ընտրութիւն, իշխանութիւն քո:
Որ պատուհասումն կորեցելոյս,
կցորդութիւն քո: Որ խաւարաւ
մահու ծածկեցելոյս, նշոյլ կենաց
քոց: Որ խռովեցելոյս իմ հան-
դարտութիւն, խաղաղութի՛ քո:
Որ մոլորեցելոյս դարձաւորու-
թիւն, ձայն քո: Զի դու տէրն ս- Յովհան
ամի գթութեամբ, և չիք ՚ի քեզ 10. 4.
մասն ինչ խաւարի: Ե՛ ոչ է Յովհան
բարութեան առանց քո: Ե՛ քեզ 1. 5.
վայելէ փառք յաւիտեանս ամէն: Նարեկ:

Նորին Աղօթք Աղջամղջին և մշտամատոյց։

Գլուխ. Ժա։

ԵՒ ԱՐԴ՝ ԵՍ երկրածինս մարդ՝ կենցա-
ղականաւ անկայուն. գտի՛ զբա-
ղեալ. և յիմարութե՟ պատրողա-
Եսայ 29. 9. կանաւ գինեաւ թմրեալ։ Որ ա-
մենայնիւ ստեմ, և ո՛չ միով
իւիք ճշմարտեմ։
Եսայ 1. 12. Բանիւ որո՞վք դիմօք յանդգնե-
ցայց յանդիման լինել քեզ դա-
տաստանաւ դատաստանի։ Ո՛վ
իրաւադատ. ահաւոր. անճառ.
անպատում. հզօր. Ա՟ծ բոլորից.
Բանիւ՝ զասեմ 'ի սոյն՝ զապե-
րախտութի՟ մեղուցելոյ անձինս՝
առ քումդ երախտիս. ցուցանե-
լով զիրաւունս քո միշտ զօրացեալ.
և զանիրաւութիւնս իմ յաւէտ պար-
տաւորեցեալ։ Որ արարեր զիս 'ի
պատկեր քո պանծալի. 'ի ձեռն ուրն
մե

մի հէգ տպաւորութե՛ դրոշմաս
օծ անդամակելով : Զարդարեցեր Ծննդ
բանիւ։ Փայլեցուցեր վեհմամբ։ 2.7
Սոքք ձուլացուցեր։ Իմաստիւք Յոհան
աճեցուցեր։ Հանճարով հաս- 20.22
տատեցեր։ 'Ի շնչականացն որո- Մէրկ
շեցեր։ Հոգւով իմանալեաւ 17.5
խառնեցեր։ Իշխանականին դիրս
պճնեցուցեր։ Ոնար հայց; զբաւր։ Պետրոս
Սնուցեր դայեկապէս։ Տածե- 1.3
ցեր ստացողապէս։ Տնկեցեր զմ Սաղմոս
բարեշտս 'ի քումդ գաւթի։ Զը 91.13
բոյն կենաց ոռոգեցեր : Ճագա Մատթ
նին ցօղով մաքրեցեր : Կենաց 28.19
վտակաւն սրբամատուցուցեր։ Հա- Մարկ
ցիւդ երկնայնով ջամբեցեր : 16.16
Ծայրին արեամբդ արբուցեր :
Անհպելոյն և անհասանելեայն՝ ըն-
տանեցուցեր։ Զայս երկրեղէն
'ի քեզ համարձակեցեր : Լու-
սովդ փառաց՝ վերածածկեցեր։
Զհօ

Զհողանիւթ մասունս անմաքուր
ձեռացս՝ ՚ի քեզ մատուցեր: Ըզ
Ծննդ 18. 27: մոխիրս անարգ և մահացու՝ եբեր
Մատթ 6. 9: զնշխարս լուսոյ յարդեցեր: Զհայր
քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մար-
դասիրականն անարժանիս ան-
Եսայ 6. 5: ձին կոչեցեր: Ո՛չ կպեր զբե-
րանս լցեալ նանրութբ՝ ՚ի ժա-
ռանգակիցն կարդալ զքեզ: Ո՛չ
կշտամբեցեր զյանդգնեալս՝ ՚ի
քում կցորդութեան: Ո՛չ ստուե-
րացուցեր զտեսիլ աչացս՝ ՚ի
քում ակնարկութեն: Ո՛չ արգե-
լեալ կապանացն՝ ընդ մահապար-
Ղուկ 18. 11: տացն տարագրեցեր: Ո՛չ խոր-
տակեցեր զդաստակ բազկիս՝
որ անմաքրապէս առ քեզ համբառ-
Յոհան 20. 27: նայր: Ո՛չ մերժեցեր զտասն իմոց
մատանց՝ ՚ի շօշափելն զբանն կե-
նաց: Ո՛չ պատեցան զինեւ մառա-
խուղք՝ ՚ի ձօնելն զքեզ ահաւոր:

Է 4 Ո՛չ

Ո՛չ փշրեցեր զպարս ատամանցս՝
՚ի ծառքէն դ.քեզ անտահմանելի.
Ո՛չ գնացեր բարկութը խոտոր Ղեւտ
նակ. խոտորնակի ընդ քեզ հե- 26. 21.
տեւողիս՝ երբեմ ընդ վրիպեալ տա- 24. 18.
նելն խոպնեցի ։ Ո՛չ խայտառա- Առակ
կեցեր ՚ի հրապարակի ղանդր- 22. 12.
ժանս քուրմ զպարերգութե ։ Ո՛չ
՚ի դժուծ հանդերձին ածուլ զա- Առակ
նօրինակս յանդիմանեցեր ։ Ո՛չ 22. 11.
կարենոք ձեռացս և ոտիցս՝ յար
տարին խաչարին հարածեցեր ։
Զայս ամ մասունս բարեաց և Հռով
զներբերդ երկրպագութի ընկա 2. 4.
լեալ ՚ի քէն բարերար՝ որհնեալ
և յանձնաձեի միշտ երկրպագեմ,
ընդ այսպիսեաց բարեաց փոխար-
րեցի ։ Զայս քեզ լինէին հա- 2 Օրէ
տուցի չարիս ըստ մեղսակեան յան- 32. 6.
դիմանութեն որ առ յակօք. մե-
ռուցեալ զիմաստութիւն սիրոյ

Ղուկ. 15. 13. յիմարութեան: Զայնց բարեաց
երախտեաց կամաւ՝ ընդունայ-
նութեան գնացիք չարաչար ու-
նայնացուցի: Զայս լուսաւորու-
թիւն շնորհաց անճառ էր՝ 'ի բարձ-
րելոյդ խնամոց բարդեցեալ՝ մերը
կամին խոնարհութեան ցուցեցի:
Որդ՝ քո է ընձեռեալ կեանս՝
հոգւով մեռելոյս, և անոխակա-
լութբ մատուցի առ այցելութիւն
դատապարտելոյս. որդի այ՜ բարձ-
րելոյ: Եւ քեզ փառք յաւէ յա-
ւիտեանս ամէն:

Նորին Աղօթք Ապաշխարողի և ճշմարտասիրաց:
Գլուխ. Ժբ.

ԵՒ ՈՐԴ ԶԻՆՉ
ղոյ ծնեալս անձն իմ կո-
րուսեալ. կամ որ թաղեցի.
Մատթ. 18. 34. կամ զնոյն ապրեցի. կամ որ
այս ենթեցի 'ի մեղաց բանտէ:
Փառն

Վանդք բազում են պատրաստեալ՝
և անթիւ հատուցմունքն։ Սաս
տիկ կշտամբանքն, և անվախճան
նախատինքն․ Անպատմ են հրոյ շ
տանքն, և անկաշառ դատաստանն։
Ահեղ է ատեանն, և անաչառ
բեմն։ Վառեալք են բազմատանջա-
լիքն, և անողորմ հատուցմունքն։
Աշխարհն հրամանն, և մերկապա
րանոց յանդիմանութիւնքն։ Ահեղ են Դան․
են դևարքն, և անանցանելի են 7․ 1․
վտանգքն։ Տանջանաց խաւարն,
և արտաքոյ պսակման՝ մասն խուցն։
Անդրդուելի է դուռն, և մշտն- Եսայ
ջենաւոր է տառապանքն։ Անսա 24․ 17․
գրաւ տարտարոսն՝ և անշէջ սա
նամանքն․ Անբաւ քեզ են Մատթ
գանձեալ դառնութիւնք այսպիսի գժն 25․ 41․
դակք, և տաժանելի օթևանք,
անբժշկելի լացք պատուհասից։
Ով անարժան անձն իմ մեղա-
ւոր

Մատթ. 13. 36: ծո՛ր՝ չարագործ՝ պատնիկ՝ բազմա-
բիծ, և սահման անդաստանի՝ բնա-
ծին անմաքրութեան: Ահա՛ զոր
դիւան գործոց ձեռաց քոց ժառան-
Սաղմոս 9. 17: գեցես: Թիւրեալդ ՚ի յուղղու-
թեց, և զառածեալդ ՚ի մաքրութեց:
Օրին. 6. 12: Տարագրեալդ յարդարութեց, և
՚ի կարգաց պարկեշտութեց: Ընկեալդ
՚ի լիութեց՝ հոգեպարգև հարստու-
Նաւում 1. 6: թեց. նախանձարկու բարերարին
և ամենակալ Թագաւորին: Եւ քանզի
կառուցեր քեզ զանձն արգելան՝
և զանխախտելի որոգայթ. խոստո-
վանել քեզ զէն զանբժշկականդ քո
վէր. և զանօրինակդ քո զհարուած
վկայել անձինդ քո պարտական մահու
զանբուժելիդ բեկումն: Ո՛վ չարդ
՚ի բարեաց: Ո՛վ դառնութիդ՝ ՚ի
քաղցրութեց: Ո՛վ խաւարդ՝ ՚ի լու-
սաւորմէ: Ո՛վ կողոպտեցեալդ՝ ՚ի
պճնելոց: Ո՛վ զրկեցեալդ՝ ՚ի
գովելոց: Ո՛վ

Ո՛վ ամբարիշտդ՝ ՚ի բարեաց մշակից։
Ո՛վ շնչականդ՝ ՚ի բանականաց։
Ո՛վ անմիտդ՝ ՚ի մտաւորաց։
Ո՛վ անհանճարդ՝ յիմաստնոց։
Ո՛վ անմաքուրդ՝ յընտրելոց։
Ո՛վ մահացուդ՝ ՚ի կենդանեաց։
Ո՛վ խոնարհականդ՝ ՚ի Սրբոց։
Ո՛վ արբշիռդ՝ ՚ի պարկեշտաց։
Ո՛վ կեղծաւորդ՝ ՚ի ճշմարտից։
Ո՛վ անպիտանդ՝ ՚ի պիտանեաց։
Ո՛վ անարգդ՝ ՚ի փառաւորաց։
Ո՛վ նուաղդ՝ յառաւելութեց։
Ո՛վ գերիդ՝ յազատաց։
Ո՛վ նուաստագոյնդ՝ ՚ի վեհից։
Ո՛վ աղքատդ՝ յընչեղաց։
Ո՛վ անարժանդ՝ յարժանաւորաց։
Ո՛վ անանկդ՝ ՚ի բարձրութեց,
և ՚ի հոգևոր հարստութեանց,
և անիծեալդ յօրհնեցելոց։
Ես արդ՝ զի՞նչ արժանաւոր յի-
քեզ բամբասանս շարադրեցից ՚ի

կատակ

կրակի մոլթանաց մատենի այսր
ողբերգութեան:

Ով անձն իմ թշուառական. ամենապատկառ. և առ պատաս-
խանելն քանիցս անբարբառ:

Ընդպէտան այ՝ և օրէցն մանուկ-
ցութեանց: Զի թէ զլինելն
ծովուց 'ի յորակուէ դեղոյ յեղ-
յեղեցից. և զանշոս ապարխոք
բազմօք աւշմանեալ՝ 'ի տարածու-
մըն լայնութե քուրանենի չաքեցից.
և զպրակս յոգունց անտառաց՝
շամբից եղեգանց 'ի հաստահածս
դպրութեց գրչաց կազմեցից. ոչ
զթիւ մի 'ի բարդեցելոցդ անօրէ-
նութեանց զօրեցից ը գրով սահ-
մանել մարթէի: Նաև թէ զմեյրս
լերանանս 'ի մի բուռ կշռոց դօղե-
ցից, կամ զլեռան արարածեան 'ի
կէտ ամբարձման նժարի միոյ ար-
դարութեան միջնորդ կշռ. ցից.

ոչ

ոչ հաւասարի այնր հարթութեն
համագունակցեալ: Ո՜ւա ամ-
բարձ աղէշ՝ սուտ աստուածն զի ան-
բնակից՝ ունայն ՚ի պտղոյ՝ նմանեա-
լից յաւէտ հարազատ՝ այնր թզ-
ենւոյ՝ զոր անէծն Քրիստոսյոյ:
Քանզի՝ սաղարթուք վարուց՝ Մատթ. 21. 19.
այսինքն է արտաքին զխմոք բարի Մարկ. 11. 14.
շուք կերպից՝ իբր պսակաւ ինչ
պաճուճեալ՝ բազմականաց զալ
բաղձալի: Իսկ եթէ մերձեսցի
անկոյն՝ խուզել զհնդրեալն, զոյէ
զքեզ ունայն ՚ի բարեաց, և զար-
շինք ՚ի զենդ ցկուլթեց: Ողբը
անտոնոյ՝ և նշանակութի նախա-
տոյ: Ո՜ հա զայդ զազա-
նեայ մարդ խորհրդոյ՝ իբր ըղ
դրխամարեալ հարկաւորութիւն
զյարութեան զարծոյ խոստով-
նեալ քեզ սարսեցից ձեզ իմ
և ակր: Սան չէ քո է փրկու-
և

և 'ի քէն է քաւութի. և աջով քով նորոգութիւն. և ձեռամբ քով զօրութիւն. և 'ի հրաման-նաց քոյ արդարութիւն:

Եւ յաղթութեանց քոց ազա-տութիւն. և յերկնաց քոց լու-սաւորութի: Եւ 'ի գթանաց քոց զուարճութի: Եւ հոգւոյդ քով բարութիւն: Եւ օծմամբ խաղդ քոյ սփոփութի. և ցօղով շնորհի քոյ զուարճութի: Եւ դու ստա մխիթարութիւն՝ և մնացուցա-նես զվհատութի. և բառնաս ըզ խուճապ վշտաց: Եւ զհեծութիւն որոց՝ 'ի ծաղր փոխես:

Եւ քեզ վայել է օրհնութիւն՝ գովութեամբ հանդերձ յերկնից յերկիրս, և յազգս հարց՝ և 'ի ծնունդս նոցա, յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին Աղօթք Աստուածածնին և մշտամաքրոյ։

Գլուխ. Ժբ։

ԷՍԿ ՕԱՈՒԹ
ալն՝ մաչու զերկուծած՝
զժոխարմատ ծառոյս զանձնոյն
պտուղք․ ընտանիք թշնամիք,
հարազատք՝ հակառակք։ Եւ որ
դեք զաւանձնօղք։ Սատրագրե-
ցելովք մատամբք նշանակեցի՝
զրեալ յանուանն, որքեն այսոքիկ։
Սիրատ նանրախորհուրդ․ Ոխերա
նրա չարախօս։ Ահեա արատաւոր։
Ականջս մրկարդուր։ Ջեռնս մա
հաձիզ։ Երկկամունքս անխորձ։
Ոտքս մոլորաշաւիղ։ Ոնթացքս
անընկեր։ Հետքս խոտորնակ։
Տունչս ծխախառն։ Գնացքս
խաւարայինս։ Գործելին լերդխ
վնասակաս։ Խորհուրդք ծոցեալ։
Կամքս անկայուն։ Ջարք անխ
փոխ։ Անձնս սպառադիր։ Աւան

դրս

դրս փառաւորեալ ։ Պարզան վերա-
հոր։ Թռչուն նետահար։ Փա-
խըստական քարավէժ ։ Ըմբռնե-
ցեալ վտանգապարտ։ Ըմպակ մա-
հակձիռ ։ Զինուոր անզօր, Մր
տիկ անպատրաստ ։ Սպառազէն
անժուժկալ։ Աճակ հեղձուցեալ ։
Ըղօթեական անխրախոյս ։ Բե-
ռական սուրընաբարշ։ Քահանայ։
անկենդրուկ։ Օրհնական անմոնէր։
Պակէր կշտամբեալ ։ Իմաստակ
խելագար։ Ճարտասան անձոռնի։
Կերպ անպատկառ։ Պէտք ան-
ամօթ։ Տէր անարդի։ Պետ ծա-
նակեալ ։ Իշխանիկ խաւարեալ ։
Եսայ 5: 4: Ճաշակ դառնեցեալ։ Ըյգի փշր
շուշոր։ Որթս որդնահար ։ Պար-
տեզ տատասկաբեր։ Հանկ ուռ
ձակեր։ Անդր խեղկերպեա ։ Ար
նապարծ յուսահատ ։ Ոտնայնա-
բան շաղակրատ։ Արդեն դնուլ թիւն
ան

անհամ: Երկրագործ տատասկա-
ցանն: Երջանկուլ եղկելի: Մե-
ծութիւն վատթարեալ: Վայել-
չութիւն անշքեալ: Կարողութիւն
տկարացեալ: Բարձրութիւն խո-
նարհեալ: Փառաւորութիւն ընդ-
ունեալ: Պատուիրանազանցուլ
յարակայ: Սխալանք ինքնակամ:
Ստահակաբար կամակոր: Խորհր-
դակից նենգաւոր: Բարեկամ
հատուածեալ: Հաղաքայեա գո-
ղամիտ: Բաշխօղ ժլատ: Վերա-
տեսուչ կարկամ: Ողջ ախտա-
կիր: Իղձք անաէր: Բարք ատե-
ցող: Աղէք անդթականք: Վա-
ճառական վատնիչ: Պաշտօնեայ
արբեցող: Պատգամաւոր քանսար-
կու: Դռնապան քնէած: Աղքատ
հպարտ: Մեծատուն անողորմ:
Պահապան մատնիչ: Բնակակից
չարախօս: Սուրհանդակ անժա-

ման

մամն ։ Թղթաբեր պարտաւոր։ Նաւաքել խռովարար ։ Անձնադ֊ անէմատատ ։ Թագաւոր թարմա֊ տար։ Կոյր ոգէկործան։ Իշխան տիրադաւ ։ Զօրաւոր զրկող ։ Պատաւոր կաշառառու ։ Որդ՝ այսօրինակ ամենայն մոլութեանց հագուոց խաւարի․ ողորմութեամբ լուսոյ քոյ պատահեսցես ու քն ինձ․ լուսաւորել․ բժշկել․ քա֊ ւել․ և կենդանագործել․ և քեզ փառք յաւիտեանս․ ամէն ։

Նորին Աղօթք Աղաչանաց և մխիթարութեան։ Նաև առաքել ՚ի հինգշաբթի՝ և յաղագս աղօթիցն սրբոյ ։

Գլուխ. Ժդ.

ԱՐԴ ՈՂ ՈՉՆՄ զկենսամանկոյդ փառաց և ճա֊ րաց․ տածանելեաց կրեց թախծու֊ թեաց հոգւոյս՝ վճարեցելոց։

Ա՛յ

Մի՛ յաւելուր՝ հեծութեան ցաւ:
Մի՛ խոցեր՝ զվիրաւորեալս:
Մի՛ դատապարտեր՝ զպատժեալս:
Մի՛ տանջեր՝ զչարչարեալս:
Մի՛ գաներ՝ զհարուածեալս:
Մի՛ գլորեր՝ զանկեալս:
Մի՛ կործաներ՝ զգայթագղեալս:
Մի՛ մեժեր՝ զհեռացեալս:
Մի՛ տարագրեր՝ զհալածեալս:
Մի՛ ամաչեցուցաներ՝ զպատկա-
ռեալս: Մի՛ կշտամբեր՝ զհար-
թուցեալս: Մի՛ խորտակեր՝ ըզ-
բեկեալս: Մի՛ խռովեցուցաներ՝
զամբոխեալս: Մի՛ աղէկոծեր՝
զվշտացեալս: Մի՛ սասանեցուցա-
ներ՝ զդղրդեալս: Մի՛ շփոթեր՝
զմրրկեալս: Մի՛ կեղեքեր՝ զթէ-
շառեալս: Մի՛ ջախջախեր՝ զբե-
կեալս: Մի՛ դօշեր՝ զմորմոքեալս:
Մի՛ կուրացուցաներ՝ զխաւա-
րեալս: Մի՛ զարհուրեցուցաներ՝

զապ

դատապարտելոյ։ Ո՛վ խոնարհեր զհպար-
տացեալս։ Ո՛վ մահացուցանէր՝
զհեշտանդացեալս։ Ո՛վ բեռանց
ծանրութե մատնեալ՝ զօրավարս։
Ո՛վ անոր յուսոյուր՝ կարկառ
եալ թեւկանցս։ Ո՛վ սուր կըկնա
կի սղբամի՝ դառն հեծութեանս։
Ո՛վ ուժգնակի վարեցոյց՝ առ
հողս։ Ո՛վ սատակողէն՝ առ մո-
լորս։ Ո՛վ անաչառ արդեն՝ առ
ամբարծուծածս։ Ո՛վ ահարկու՛
առ փոշիս։ Ո՛վ ընդհարկանիր
խոստութի մեծդ՝ ընդ փոքու։
Նոյն՝ ընդ սորինակաիւ։ Ըն-
նութեամբ բարեդ՝ ընդ 'ի ընե
Եսայ չարիս։ Ողջոյն օրհնութե՝ ընդ
65. 8. պատիժս անիծից։ Բաղցրութեդ
խակայէն՝ ընդ համայն դառնու-
Մաղ. թեանս։ Փառաւորեալդ անմխ-
3. 6. մուխ՝ ընդ ամենեքին անարգիս։
Աչնացդ նշխար՝ ընդ կախտոս զանդ
ուրա

ուածոյ: Տէրդ տիրանց՝ ընդ-
ավլիս երկրածնոյ: Ամենաւալ լի-
ութեանդ՝ ընդ չքաւոր աղքկիս:
Անկապուտ ճոխութեանդ՝ ընդ ան-
պատսպար տառապելոյս: Անկա-
րօտ բարութեանդ՝ ը ամենաթշ-
ուառ աղքատիս: Բանզի ո՞վ որ
համեալ յառաւօտ, և 'ի ծագման
լուսոյն՝ խնդրեաց մթանալ: Կամ
ընթ՝ քաղցեալ կերակրոյ՝ և մահանալ:
Կամ ազատութեն՝ և պարտաւորել:
Կամ շնորհաց և դատապարտել:
Կամ փրկութեն՝ և մատնել:
Կամ նորոգման՝ և եղծանել:
Կամ օրհնութեն՝ և տարադրել:
Կամ բժշկութեն՝ և վիրաւորել:
Կամ լուսութեան՝ և նուաղել:
Կամ յաճախութե հացի՝ և քաղց-
նալ: Կամ գետոց հոսանց՝ և
պապակել: Կամ ծնողաց գթոյ՝ և
նենգել: Կամ խնամոց ա̄ծեան

աջոյդ

աչքոյդ՝ և զգուշել ։ Եւ տուր՝ ընդ
անխափանելոյն սատակապէս մարմ
նոյն բարութի հոգւոյս փրկան_
դակ՝ և ես պաղատիմ։ Տէր՝ ե_
Մատթ. թէ կամիս, կարող ես զիս սրբել։
8. 2. Ընդ աչօքաւն նեղելոյ մշտա_
Մարկ. գնելին խորխախանօք․ մեծակա_
1. 40. կան ձայնիւ հառաչեմ․
Մատթ. Ո՛չ զքեզ որդի անուանեմ զա_
2. 30. թի. այլ ծնունդ կեղ ոչ դաւա_
Ղուկ. նեմ ։ Ո՛չ միայն ռաբբի կոչեմ՝
10. 51. որ վարդապետայն է պատուի․ կար
ծողական զեկլն գիտելոյ․ այլ՝ տէր
երկնի և երկրի հաւատամ ։
Մատթ. Ասա բանիւդ, և բժշկեցայց։
8. 8. Ընդ հարիւրապետին հաւատոյ՝
Ղուկ. և ես ընծայեմ ։ Շնորհեա ինձ
7. 7. որպէս դատաւորիկք բանին քո վր_
Մատթ. ռեալ՝ առ պատնէշին ընդունելու_
26. 7. թիւն հնդից հարիւր դենարաց
պարտուց շնորհաբաշխութիւնք։

Ո՛վ բարութեանց՝ և որ երանու- Ղուկաս 7. 37.
թեանց։ Որ ՚ի յաճախ ընձեռու
լոյս՝ բազում փառաւորիս։ Եւ ՚ի
շնորհ մատուցանել՝ նուիրն շնոր ան
իմ։ Եւ ՚ի յաւ անէն օրհնութեն՝
կրկին բարեգործութիւնս։ Եւ յայս-
քան բարիս՝ երախտաւորք գտիր։
Եւ անի ոչ ըստ գործոյ՝ հատուցա-
նես ձանձրացեալս։ Որքան արարեր
և ինձ պէտս դթութիւն. ուխտես
զգործս անհնարին պարտուց։ Եւ
քեզ փառք այժմ. Ամէն.

Ի սորին Աղօթք Աստուածային և մարդասիրաց։
Եւ առաքեալ ՚ի հրեշտակութեան՝ և յաղագս
պատուիրանի իմոյ։

Գլուխ. ԺԵ.

ԱՐԴ ԵՍ ԾՆ
նունդս մեղաց, և որդին Սաղմոս 50. 8.
մահացու ի բնութենէ։ Պարտապան ան
սահման բիւրոց քանքարոց տու- Մատթ 18. 24.

 ժից

մեզ՝ պարտաւ՛ որ զամ հատուցա-
նել ՚ի միում աւուր։ Ս.Ա՝ ոչ
եթէ առ փոքրկութի մարդկայնի
մտաց հայցեմ ներողութի. այլ՝
յանմռունայ լաւթի փրկչին Յի
Քի պաղատիմ մարդասիրութի։
Որ չէի երբեմն՝ և ստեղծեր։
Չմաղթեցի՝ և դու արարեր։
Երեմ. ա. 5. Չև ևս եկեալ ՚ի լոյս՝ և տեսեր։
Ո՛չ յայտնեցեալ էի՝ և գթացար։
Ղուկ. ժ. 33. Ո՛չ կարդացեալ՝ և խնամարկե-
ցեր։ Ո՛չ համբարձեալ ձեռն՝ և
նայեցար։ Ո՛չ պաղատեալ՝ և
ողորմեցար։ Ո՛չ կերպացեալ ձայ-
նիս՝ և լուար։ Ո՛չ հեծեծեալ՝ և
ունկնդրեցեր։ Կանխահայեցդ ա-
չօք նկատեալ զպատուժ ապա։ ըստխ
չարագործութի, և յօրինեցեր։
Եւ՛ արդ՝ զքո արարեալս. և ըզ-
քո փրկեալս. և զայսքանեաց լոր
նամոյ յանձանձեալս. մի խապա
կո

կարացէ մեղացն հրաման՝ զխռովս
բանաւորականին: Ո՞վ է յաղթեսցէ
յամառութեան խմոր մառախուղ՝
ներքութեան քոյ լուսոյ: Ո՞վ է
սրտին կարծրութիւն՝ երկայնա-
միտ քաղցրութեանդ: Ո՞վ է մա-
հացու մանկին՝ ամենակատարդ լն-
ութեան: Ո՞վ է տխրութեան
նկթոյ՝ անպարտելի բարձրութե:
Ո՛հ կայխանեմ զկարկամեալ
բարոյն հոգւոյս՝ յանուն քո հզօր
Սրբացես ողջ իբրեւ դառանցեանն.
մինչ 'ի դրախտին փափկութեան՝ Ծննդ. 2. 8.
զպտուղն կենաց կթէի: Խոնարհ
եաց առ իս՝ միայն ողորմած. զի
բարձրացուցես զխեղճս խոնարհ Ղուկ. 17. 24.
բանաւոր անկեալ. և զչորացեալն
ծաղկեցուսցես 'ի բարի կրօնս վայ
ելչութեան. ըստ ա̃ծաբանութե̃
որ մարգարէին: Ո՞վ զ'ի ծնէ կոյրն Եսայ. 27. 6.
անլուսաւոր. չունելով տեսարան՝ Յօհան.
որով 9. 1.

սրով զատեղծ չէր ՚նկատել զինքեան
մատնեցին։ Հզօր՝ բարեգութ․
Տէրդ դու պաշտելի․ անկնարելեալ
խնամօքդ անճառ քոյ սիրոյ․ ՚ի
չնչական խոստումն քո անօթս՝ յա-
